

## ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԸ

Վերջերս մեծ հանդիսավորությամբ նշվեց մեր հանրապետության բուհերի առաջնեկի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 60-ամյակը: Հիմնադրվելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերին՝ իր վաթսուհինգ զոյություն բերաբերական համալսարանն անգնահատելի դեր է խաղացել մեր ժողովրդի ազգային վերածննդի, երա տրևտեսության, գիտության ու մշակույթի զարգացման գործում, գիտական ու մանկավարժական տասնյակ հազարավոր բարձրագույն կադրեր պատրաստելով մեր բազմաբովանդակ կյանքի ամենատարբեր բնագավառների համար: Համալսարանում են սկզբնավորվել ժամանակակից գիտության մի շարք կարևորագույն ուղղություններ, կատարվել են բազմաթիվ հայտնագործություններ, տպագրվել մեծածախ գիտական աշխատություններ, որոնք անգնահատելի ավանդ են հայրենական գիտության զարգացման մեջ:

Երևանի համալսարանն այսօր միջազգային լայն կապեր ունի, ստեղծագործական համագործակցությամբ կապված է աշխարհի առաջավոր համալսարանների հետ: Երա շատ դասախոսներ շնորհակալ աշխատանք են կատարում զարգացող երկրների տարբեր բուհերում, առաջատար գիտնականները դասախոսություններով հանդես են գալիս աշխարհի շատ համալսարաններում:

Նախառոտական ժամանակներում հայ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալու համար մեկնում էին արտասահման, իսկ այսօր այնքան է անել Երևանի համալսարանի միջազգային հեղինակությունը, որ երա լսարաններում սովորում են արտասահմանից եկած բազմաթիվ ուսանողներ:

Համալսարանը մայրն է մեր հանրապետության մյուս գիտական ու կրթական օջախների, երա բազայի վրա են ձևավորվել հանրապետության գիտությունների ակադեմիան, մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններն ու գիտահետազոտական ինստիտուտները: Ահա ինչչու յուրահայտությամբ պատկանում է ու օրհնական հպարտությանը է արտասահմանում մեր հոգեվոր հարստության շուրհարանի, որակյալ կադրերի պատրաստման խոշոր դարբնոցի՝ Երևանի պետական համալսարանի անունը, որը պարգևա-

տրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շխանչանով և դասվել մեր Միության 70 առաջավոր բուհերի շարքը:

Հորելյանական հանդիսություններից առաջ կազմակերպվեց գիտական նստաշրջան, ուր համալսարանի գիտնականներն ու դասախոսները գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ կարդացին շուրջ 200 գեկուցում: Դա յուրատեսակ հաշվետվություն էր պահնայի տոնին: Իսկ համալսարանի նվանումներն ու առօրյան արտացոլող ցուցանանդեսի բացմանը ներկա էր Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար բեկ. Կ. ԳեմիՐՃՅԱՆԸ:

Հորելյանի առթիվ համալսարանում ստեղծվեց «Գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած խոշոր նվանումների համար» մեդալը, որին կարծանանան գիտամանկավարժական գործունեության մեջ առավել աշխի բնկած գիտնականներն ու դասախոսները: Առաջին մեդալը հանդիսավոր պայմաններում հանննվեց Սոցիալիստական աշխատանքի կրկնակի երեսու, Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, երևանի համալսարանի մեծ երախտավոր, ակադեմիկոս Վիկտոր Համբարնումյանին:

\* \* \*

Համալսարանի 60-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 8-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական բառոնում: Կիստին մասնակցում էին համալսարանի պրոֆեսորներ ու դասախոսներ, ուսանողներ ու շրջանավարտներ, գիտության ու մշակույթի գործիչներ, աշխատավորության ներկայացուցիչներ, կուսակցական, սովետական, կոմերիտական աշխատողներ, հյուրեր Մոսկվայի, Լենինգրադի, մեր Միության եղբայրական հանրապետությունների համալսարաններից ու գիտական կենտրոններից:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց Երևանի պետական համալսարանի ղեկար. ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ա. ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆԸ:

— Այս հոյաշեն դանիհում, ուր տեղի են ունենում մեր ժողովրդի ամենակարևոր հանդի-

սուրյունները, մենք նշում ենք Երևանի պետական համալսարանի 60-ամյակը, — ասաց նա: — Մեր համալսարանը ստեղծվել է Սովետական Հայաստանի կառավարության առաջին ղեկավարներից մեկի հիման վրա: Այն տարիներին հասալսարանը չունեւ ժամանակակից լաբորատորիաներ, գուրկ էր տեխնիկական բազայից, բայց ուներ զորեղ պրոֆեսուրա, շրջապատված էր ժողովրդի, Հայաստանի կոմունիստական կուսակցության ու կառավարության հոգատարությամբ: Համալսարանի առաջին պրոֆեսորները և նրա առաջին ուսուցիչը, ակադեմիկոս պատմաբան ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, որոնք կրթություն էին ստացել Պետերբուրգի, Մոսկվայի, Լենդոնի, Փարիզի, Քեմբրիջի և աշխարհի այլ հայտնի համալսարաններում, սկսեցին հայ երիտասարդությանը հաղորդակից դարձնել ուսական և եվրոպական գիտությանը, մշակույթին և առաջադեմ մտքին՝ շնորհաբերելով ժամանակի ներդասխանական պարտքը, մեր ժողովրդի կրթության ու գիտության նկատմամբ հոգատար պերսոնալները, դարերից եկող մշակութային ավանդները:

Ստեղծված բարենպաստ պայմաններում Երևանի պետական համալսարանը ամրապնդվեց, դարձավ ժամանակակից կրթական առաջատար հաստատություն՝ երկրին տալով բարձրագույն մասնագետներ՝ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, աստղագետներ, բնիկոսներ, կենսաբաններ, երկրաբաններ, փիլիսոփաներ, արհեստագետներ, աշխարհագրագետներ, իրավագետներ և այլն: Այն դարձավ մայր բարձրագույն դպրոցը, որից սկիզբ են առել մեր հանրապետության համարյա բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Մեծ է Երևանի պետական համալսարանի դերը հանրապետության գիտությունների ակադեմիայի ստեղծման գործում: Համալսարանը լայն ճանաչում գտած գիտական կենտրոն է, որտեղ ֆիզիկամաթեմատիկական, բնական և հասարակական գիտությունների գծով տարվում են բազմակողմանի գիտական հետազոտություններ:

Համալսարանն իր ապագան միշտ կապել է երիտասարդության հետ, այն երիտասարդության, որը, կափաված լեհիկյան զազափարներով, ամուր կանգնած է անցյալի ժառանգության դրական փորձի վրա և հստակ տեսնում է մեր լուսավոր ապագան:

Համալսարանը լուրջ ուսումնական հաստատություն չէ, այլ մշակույթի մի օջախ, որն արտանայտում է ժողովրդի մտքերն ու իդեաները: Այն ժողովրդի արդիական գոյության յուրօրինակ խորհրդանիշն է, նրա ապագայի վկայագիրը:

Մենք լավ ենք գիտակցում, որ մեր գործունեությունը միշտ պետք է ճեղքված լինի երեք առ-

կյունաբարային հասկացությունների վրա՝ անցյալի ժառանգության ճիշտ գնահատում, ներկայի բեղմնավոր գործունեություն և ապագա առաջընթացի նախադրյալների ստեղծում: Մենք համոզված ենք, որ լեհիկյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պատվով կկատարենք մեր առջև դրված խնդիրները:

Երևանի պետական համալսարանն այսօր շրջապատված է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի և հանրապետության կառավարության հոգատարությամբ: Առանց այդ հոգատարության և օգնության մենք չենք կարողանալու մեր առօրյա և հեռանկարային խնդիրները: Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում այդ ամենի համար:

Ընկ. Ս. Համբարձումյանը համալսարանի 60-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը հայտարարում է քաջված:

Համալսարանի գիտական աշխատանքի գծով պրոնկտոր, պրոֆ. Լ. Կարապետյանի առաջադեմ ներկայացումները բուռն ցնծությամբ պատվավոր նախագահություն են ընտրում ՍՄԿԿ Կենտկոմի ֆազդյուրոն՝ ընկ. Լ. Ի. Բրեժնեի գլխավորությամբ:

Ելույթ է ունենում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին ֆարապար ընկ. Կ. Գեմարձյանը:

— Այսօր, ասաց նա, մենք նշում ենք մի պանծալի հորեյան՝ մեր ժողովրդի հոգևոր վերածնությունը մարմնավորելով, Սովետական Հայաստանի բարձրագույն դպրոցների առաջնեկ, Աշխատանքային կարմիր դրոշի շխեշանակիր Երևանի պետական համալսարանի 60-ամյակը:

Թույլ ավել Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Միևնիստների խորհրդի անունից նշանավոր տարելիցի արթիվ սրտանց շնորհավորել համալսարանի պրոֆեսորներին ու դասախոսներին, սահնողությանը, ամբողջ կալեկտիվին, բոլոր սաներին, մաղթել նրանց նորանոր հաջողություններ աշխատանքում, գիտամանկավարժական գործունեության, ուսման մեջ, ցանկանալ ֆառադչություն և անձնական երջանկություն:

Հիրավի, մեծ ուրախության ու հպարտության զգացումով ենք մենք նշում այս հորեյանը: Եվ դա հասկանալի է ու բնական: Գէ՞ որ մեր ժողովրդի պատմական սխրահի մեջ, այն բանում որ նա կուսակցության ղեկավարությամբ, սովետական ժողովուրդների կուռ ընտանքի միջին երկիրը վերածել է նյութական և հոգևոր բարձր կուլուրայի հանրապետության, սոցիալիստական և կոմունիստական շինարարության փայլուն հաղթանակներ արձանագրել, համակողմանի առաջադիմության նորանոր բարձունքներ նվաճել, — այս ամենում իր ծանրակշիռ ներ-

գրումն ունի Երևանի պետական համալսարանը, նրա փաստաթանկած կառնկտիվը:

Եթե Սովետական Հայաստանում բառն գարգացում ստացան գիտության շատ ուղղություններ, ծագեցին և հասակ առան հիանալի գիտական դարձեր, որոնց նվաճումներն այսօր լայնորեն հայանի են մեր երկրում և նրա սամաններին դուրս, ապա այստեղ վնասական դեր է պատկանում Երևանի պետական համալսարանին, որ հիմնադրման հենց առաջին օրերին գարձավ գիտահետազոտական աշխատանքի, մանկավարժական մտքի կենտրոն, գիտական կողրերի դարբնաց: Եվ, վերջապես, նա՛ է մեր բուներին շատերի ստեղծում, իսկական ավամամեերը:

Եթե մեր հանրապետությունում շարունակ նվաճվել են կուլտուրական շինարարության նորանոր բնագծեր, աննախադեպ բարձրության է հասել զեղարվեստական մշակույթը, ապա այս գործում ևս իր պատկանելի լուծան է մածել Երևանի համալսարանը, որի կամարների տակ դաստիարակվել, առում են առել ստեղծագործական մտավորականության շատ ներկայացուցիչներ, մեր ժողովրդի նոր կյանքի, նրա հերոսական սխրանքի, կոմունիզմի կառուցման ոգեշունչ աշխատանքի երգիչներ:

Երևանի համալսարանը հիրավի խոշոր ու բազմակերպ ներդրում ունի Սովետական Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի, ժողովրդական կրթության, գիտության և մշակույթի սկզբնավորման ու զարգացման մեջ: Իր գոյության տարիներին նա պատրաստել է շուրջ 40 հազար բարձր որակավորման մասնագետներ: Այսօր մեր հանրապետությունում գրեթե չկա կենսագործունեության մի բնագավառ, ուր շաշխատեն նրա շրջանավարտները:

Նշելով համալսարանի այդ բազմաբեղուն գործունեությունը՝ մենք չենք կարող խորին ակնածանքով չհիշատակել նրա ականավոր հիմնադիրներին՝ գիտության և մանկավարժության առևտուր մշակներ Հ. Մանանդյանին, Հ. Անտոյանին, Մ. Արեղյանին, Աշոտ և Հակոբ Հովհաննիսյաններին, Գ. Ղափանցյանին, Ա. Տերտերյանին, Ս. Ղամբարյանին, Պ. Քալանթարին, Վ. Արծուռուն, Լ. Ռոտիլյանին, Հ. Քելեկին, Ա. Տեր-Պողոսյանին և ուրիշներին, ովքեր իրենց գիտելիքներն ու եռանդը անմնացորդ նվիրաբերեցին, որ ծնունդ առնի, ժողովրդին ծառայելու փառավոր ուղին բռնի Երևանի պետական համալսարանը:

Սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի վսեմ առաճայություն եղավ Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբներին ավելի քան 500 համալսարանականների՝ դասախոսների և ուսանողների, մեծ մասամբ կամավոր մեկնումը ռազմականատ՝ կրճով պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիք: Նրան-

ցից շատերը տան զարձան, բնկան հերոսի մահով: Նրանց շիքնակվեց իրենց խոսքն ասելու աշխատանքում, գիտության մեջ, սակայն նրանք ասացին մեծ հայրենասիրության անմահ խաբը, զոհաբերելով ամենաբարձր՝ կյանքը, հանուն Հոկտեմբերի երկրի ազատության ու անկախության: Մարտի դաշտում նրանց նվաճած փառքնակ համալսարանի փառքն է, որը դաստիարակել է իսկական հայրենասերներ-ինտերնացիոնալիստներ, սովետական ժողովրդի արժանավոր զավակներ:

Համալսարանի կազմավորման պատմությունը, շարունակում է բնկ. Դեմիրճյանը, նրա ողջ կենսագրությունը պերճախոս վկայում են մեր ժողովրդի հոգևոր վերածննդի, նրա նոր, սոցիալիստական մշակույթի ստեղծման ու զարգացման նկատմամբ կամունիստական կուսակցության և սովետական պետության մեծ հոգատարությունը: Հենց 1920-ին, Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ ամսին երիտասարդ սոցիալիստական հանրապետության կառավարությունը բնդունեց դեկրետ «Երևանի ժողովրդական համալսարանի կազմավորման մասին»: Այդ պետական ձեռնարկմամբ էլ սկիզբ դրվեց Սովետական Հայաստանի անդրազնիկ բարձրագույն դպրոցի երթին: Իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ հարազատ հողում ստեղծել բարձրագույն կրթության իր նորօրյա օջախը՝ մայր համալսարանը:

Այսօրվա հոբելյանով պատկաված այս երևույթը նակ մի ուրիշ մեծ խորհուրդ ունի: Առաջիկայում մենք նշելու ենք 700-ամյակը Գլաձորի համալսարանի, որը Անիի և Տաթևի համալսարանների հետ համատեղ նշանավորեց գիտության ու բարձրագույն կրթության համալսարանական կազմակերպման սկզբնավորումը մեզանում, գործ, որը, դժբախտաբար, մարեց մեր ժողովրդի ոգրերական նակատագրի կեռամներում:

Համամտանելով Երևանի համալսարանի աեցյալն ու ներկան և համառոտակի բնութագրելով նրա զարգացման բնթացքն ու հեռանկարները՝ բնկ. Կ. Դեմիրճյանը նշեց, որ եթե իր ծննդյան տարում Երևանի համալսարանն ուներ բնդամներ 255 ուսանող և 23 դասախոս, ապա այժմ նրա 16 ֆակուլտետներում սովորում են շուրջ 8000 պատանեներ ու աղջիկներ, ավելի քան 500 ասպիրանտ ու հայցորդ, իսկ դասախոսների և գիտաշխատողների կազմում են 29 ակադեմիկոս և թղթակից անդամ, գիտության 96 դոկտոր-պրոֆեսոր, 520 գիտության թեկնածու և ղոցենտ: Խոշոր ու բազմազան ուսումնական և գիտական գործունեություն են ծավալել 87 ամբիոններ, 13 պրոբլեմային, նյուզային լաբորատորիաներ և գիտահետազոտական խրմբեր, խիտ միջավայրերի ֆիզիկայի ինստիտուտը: Շատ բան է արվել համալսարանի նյութատեխնիկական բազան ամրապնդելու, գիտական և

ուսումնական պրոցեսը ժամանակակից սարճա-  
վորումներով, հետազոտությունների համար ան-  
հրաժեշտ արդիական միջոցներով զինելու ուղ-  
ղությամբ: Կառուցվել են նոր ընդարձակ ու-  
սումնալսողատարային մասնաշենքեր, մար-  
շական համալիր, հանրակացարաններ, բացվել  
են նոր մասնագիտացված կարիքներ, ստեղծ-  
վել է ուսումնաարտադրական, մարզատողա-  
րարական բազա:

Ընկ. 4. Գեմիրեյանը բարձր գնահատեց հա-  
մալսարանի կողեկտիվի գործունեությունը, կո-  
լեկտիվ, որ վերջին ժամանակներս նշանակալի  
հաջողությունների է հասել ուսումնական պրո-  
ցեսը, ապագա մասնագետների պատրաստման  
գործը բարելավելու, ուսանողությանը համալ-  
սարանում իրականացվող գիտական և ինժեներ-  
ական մշակումներին հաղորդակից դարձնելու  
ուղղությամբ: Ես նաև ընդգծեց համալսարանի  
ծանրակշիռ ներդրումը ժամանակակից գիտու-  
թյան մեջ, մայրենի լեզվով բուհական դասա-  
գրքերի ստեղծման, բուհական մասնագետների  
ուսկավորման բարձրացման գործում:

— Կենդով հանրապետության եկրորդ խո-  
շոր գիտական կենտրոնը Հայկական ՍՍՀ գիտու-  
թյունների ակադեմիայից հետո, ասաց ընկ. Գե-  
միրեյանը, համալսարանը հետազոտություններ  
է ծավալում ժամանակակից գիտության շատ  
ուղղություններով. լայնորեն հայտնի են ինչպես  
բնական, այնպես էլ հասարակական գիտություն-  
ների բնագավառում այստեղ կատարվող գիտու-  
կան աշխատանքի արդյունքները: Երևանի հա-  
մալսարանի գիտնականները մշակում են ժողո-  
վրդատնտեսական կոնկրետ խնդիրների հիտ-  
կապված շատ թեմաներ, որոնք արտացոլվում են  
հանրապետության և երկրի տնտեսական ու առ-  
ջիակական զարգացման պլաններում: Ընդլայն-  
վել են միևնուրույնությունների, գերատեսչություն-  
ների, ձեռնարկությունների և գիտական հիմ-  
նարկների ճետ կենված պայմանագրերով իրա-  
կանացվող հետազոտությունները: Այս ամենում  
մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, զոհունակու-  
թյամբ ծանոթանալով կատարված աշխատանքի  
արդյունքներին, որոնք ներկայացված են օրերս  
համալսարանում բացված ցուցահանդեսում:

Երևանի համալսարանում ծավալված գիտա-  
նետազոտական աշխատանքները կզգիացած, մե-  
կուսացած չեն: Համալսարանի գիտնականները  
համագործակցում են մեր Միության եղբայրա-  
կան հանրապետությունների գիտական կենտ-  
րոնների հետ և նրանց հետ համաժայլ ընթանում  
վերընթաց ուղիով: Դա նպաստում է մեր հայ-  
րենիքի ժողովուրդների բարեկամության և մշա-  
կութային կապերի ամրապնդմանը: Այս առումով  
կարևոր և արդյունավետ աշխատանք է կատա-  
րում համալսարանի հայագիտական կենտրոնը:

Որպես Երևանի համալսարանի օրեցօր աճող

անվիճելի հեղինակության ապացույց ընկ. Գե-  
միրեյանը բերեց այն փաստը, որ ներկայումս  
նրանում ուսում են ստանում աշխարհի 26 եր-  
կրների հաղորդվող երիտասարդներ: Երևանի  
համալսարանն իսկական ձգող փառս է դարձել  
բազմաթիվ սփյուռքահայ երիտասարդների հա-  
մար: Մայր հայրենիքի ավագագույն բունում  
նրանք ստանում են կրթություն, սովորում են  
ասպիրանտուրայում, բարձրացնում իրենց որ-  
կավորումը:

Ընկ. Գեմիրեյանը դրական գնահատեց հա-  
մալսարանի ռեկտորատի, կուսակցական կազ-  
մակերպության և նրա կուսկոմիտեի, արձմիրա-  
թենական և կոմերիտական կազմակերպույուն-  
ների նպատակասլաց աշխատանքը պետհամալ-  
սարանի առկ կանգնած խնդիրների գործարար,  
հետևողական լուծման ուղղությամբ: Միաժամա-  
նակ նա աշխարհ շարեց այն իրողությունը, որ  
այսօր համալսարանի ուսանողների 25 տոկոսն է  
միայն սովորում «գերագույն» և «լավ» գնահա-  
տականներով, և դեռևս բայլ է նրանց մասնակ-  
ցությունը ամբիոններում, պրաքլիմային լաբո-  
րատորիաներում տարվող գիտահետազոտական  
աշխատանքներին:

Ելենիով ՍՄԿ XXVI, Հ44 XXVII համագա-  
մարների և ՍՄԿ4 Կենակով 1981 թ. նոյեմբեր-  
յան պլենումի որոշումներից՝ ընկ. 4. Գեմիրե-  
յանը նոր ու առավել պատասխանատու խղե-  
ղիներ առաջադրեց համալսարանի կոլեկտիվին՝  
կապված բարձր որակավորում ունեցող կադրե-  
րի պատրաստման և բուհական գիտության հե-  
տագա զարգացման հետ:

Համալսարանական կրթություն հասկացու-  
թյունն իսկ ենթադրում է ընդհանուր գիտական,  
ֆունդամենտալ առարկաների խոր յուրացում,  
համակողմանի զարգացում, — ասաց ընկ. Գե-  
միրեյանը: Հենց այսպիսի գիտական պաշարով և  
այդպիսի զարգացմամբ պետ է սկսեն իրենց  
այսպես գործունեությունը այսօրվա ուսանողնե-  
րը, նրանք, ում վիճակված է աշխատելու 21-րդ  
դարում:

Սակայն, իրագրեկ, լավ մտառագետ լինելը  
դեռևս բիչ է: Հարկավոր է, որ համալսարանից  
ելեն իսկական բազալացիներ, սովետական հայ-  
րենասեր-ինտերնացիոնալիստներ, որոնք իրենց  
կյանքի գերխնդիրն են համարում պայաբար հա-  
նուն մեր մեծ հայրենիքի առաջադիմության ու  
բարգավաճման:

Առաջաները նշանակություն ունի մարքս-լե-  
նինյան ուսմունքի դասավանդման զարգացարտ-  
տեսական մակարդակի բարձրացումը: Ուսանող  
երիտասարդության կողմից մարքսիզմ-լենինիզ-  
մի, ՍՄԿ4 պատմական փորձի խոր յուրացման  
գործը հարկավոր է սերտառնել շարկապել կուսու-  
նիստական շինարարության պրակտիկայի, ու-  
սանողների սոցիալական ակտիվության զար-  
գացման հետ: Հասարակագիտական առարկանե-

րի դասավանդումը, որը բարձրագույն դպրոցում տարվող գաղափարախոսական աշխատանքի միջուկն է, պետք է լինի կենդանի և ստեղծագործական գործ, վարվի այնպես, այնպես կապվի ժամանակակից կյանքի պրոցեսներին, որ պետքի գիտական կոմունիզմի՝ ճանաչողության, իրականության վերափոխման տեսության և մեթոդի տիրապետումը դառնա գաղափարական ամուր համագումակներ մշակելու, այնպիսի հատկություններ ձեռք բերելու հիմք. ինչպիսիք են հավատարմությունը կոմունիզմի իդեալներին, անհողողող վստահությունը նրա պատմական նշմարտացիությունը, դասակարգային և համագոյային հպարտությունը. հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, ծառայի հիթավի կոլեկտիվիստական, կոմունիստական հոգեբանության ու բարոյականության մշակվածը, արթնացնելի վեճ զգացմունքներ, հասարակությանը առավելագույն չափով օգտակար լինելու, կոմունիզմի գործին հավատարմորեն ծառայելու պահանջումներ:

Դասավանդման մակարդակը կարելի է բարձրացնել միայն այն դեպքում, եթե մշտապես աճի եննց իրենց՝ դասախոսների գիտելիքների մակարդակը: Իրա համար մանկավարժը պետք է շարունակ հարստացնի իր տեսական պատրաստականությունը, հիմնավորապես տիրապետի գիտության իր բնագավառի նորագույն ձեռքբերումներին, լինի բարձր բուն իմաստով բարձր կալտուրայի տեր, խորագիտակ մարդ, սոցիալապես ակտիվ այնպիսի անձնավորություն, որի օրինակը ուսանող երիտասարդությանը սովորեցնի համառ աշխատանք, ինքնամոռաց նվիրում գիտությանը, բաղաճացիականություն, կուսակցական և դասակարգային սկզբունքայնություն, գաղափարական և բարոյական անձնազարտություն, նվիրվածություն մեր հասարակությանը վեճ իդեալներին:

Մեր համայնաբանն ունի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հարուստ փորձ և հիանալի ավանդույթներ: Այսօր էլ այնտեղ ուսանողների կրթության և դաստիարակության պատասխանատու գործը լավագույն ձևով իրականացնում են բազմահմուտ պրոֆեսորներ և դասախոսներ, որոնցից շատերի վաստակը ստացել է արժանի գնահատանք: Բոլոր ժամանակներում համայնաբանը եղել է մեծ գիտության կադրերի հիմնական դարբնոց: Եվ հիմա էլ նա պետք է անդուլ կերպով հոգ տանի, որպետի իր շրջանավարտները ավելի լայնորեն համայնքն նաև գիտակցանքների շարքերը, իրենց ուսերին առնեն գիտության հետագա զարգացման ու թեթև բեռ: Այդպես խոստումնալից գիտնականների որոնումը պետք է սկսվի շատ ավելի վաղ, քերես դպրոցից, համայնաբանական ուսանողության առաջին իսկ ֆայլերից: Գիտությանը վստիվ օրվա մասին պետք է մտածել այս-

օր: Մեզ համար հրատապ այդ գործը հրամայաբար պահանջում է պետական մոտեցում, կուսակցական հոգասարություն ու բացառիկ շահագրգռվածություն: Հենց այս նեխ մեխ ակնկալում համայնաբանի ռեկտորատից և կուսակցական կազմակերպությունից:

Ներկայումս գիտության կարևորագույն անլիքները պետք է որոշվեն էլակետ ունենալով մեր երկրի առաջընթացի՝ կուսակցության մշակված տեսնական հստակ ստրատեգիան:

Տեսական ֆունդամենտալ հետազոտությունների ընդլայնմանն ու խորացմանը զուգընթաց բուհական գիտությունը պետք է վճռաբար շրջադարձ կատարի դեպի հանրակրթության կարիքները, ընդհուպ գրավի այն քեմաների մշակումը, որոնք թելադրվում են մեր ժողովրդական տնտեսության շահերով, ծառայի էկոնոմիկայի արդյունավետության բարձրացման, հասարակական արտադրության ինտենսիվացման, գիտատեխնիկական առաջդիմության բստ ամենայնի բարձրացման նպատակներին: Հանրակրթության յուրաքանչյուր բուն պետք է ստույգ որոշի իր սեղն ու դերը այդ կարևոր գործում, ընդ գիտական և հետազոտական գործունեության այն ուղղությունները, որոնք ինքը կարող է հասնել շոշափելի արդյունքների, առավելագույնը ներմուծել ժողովրդատնտեսական խոշոր սյուրբյուների լուծման գործում:

Բազմամյա փորձով ստույգված է, այնուհետև նշում է ընկ. Կ. Գեմիբյանը, որ բունական գիտության առթև ծառացած խնդիրների հարող լուծման ուղիներից են միջբունական կոպերագիայի, բնական և հասարակական գիտությունների ինտեգրացման միտումների, ինչպես նաև ակադեմիական ինստիտուտների և արտադրության հետ կապի ամրաստուղումը, գիտահետազոտական և փորձնական ստրուկտուրական աշխատանքների կազմակերպման ծրագրանկատակային եղանակի լայն արմատավորումը: Գործին մեծապես նպաստում է նաև համագործակցությունը եղբայրական հանրակրթությունների բուհերի հետ, գիտական և ուսումնական աշխատանքի առաջավոր փորձի փոխանակումը և արմատավորումը: Այս ուղղությամբ արվածը համայնաբանը պետք է շարունակի հարստացնել և ընդլայնել:

Գիտությունը պետք է օգնի «հայրաթելու» այն, ինչ մեզ՝ չի տվել բնությունը: Բնական և նշգրիտ գիտությունների գործիչներից մեխ ուպասում ենք նոր հայտնագործություններ, հետազոտություններ և մշակումներ, որոնք սոստաբայ լինեն տվյալ ասպարեզում, հնարավորություն ընձեռեն տեխնոլոգիական պրոգնոսների հեղափոխական նորացման, այդ հիման վրա սպահովեն բարձր արտադրողականություն և որակ: Կարևոր է նաև արտադրական պրոցեսներին մեխնալացումը և ավտոմատացումը սպա-

հովող նորագույն սարկերի, մեքենաների, մեխանիզմների մշակումն ու ներդրումը, անբափոն տեխնոլոգիաների, նոր, հատկապես կամպոզիցիոն նյութերի, դրանց արտադրման և մշակման եղանակների ստեղծումը:

Համալսարանի հասարակագետներից մեկն ծանրակշիռ ներդրում ենք սպասում ՄՄԿ XXVI համագումարի առաջադրած տեսական ու գործնական պրոբլեմների մշակման մեջ: Անհրաժեշտ է ուժերը կենտրոնացնել մեր կուսակցության պատմությանը, նրա հեղափոխական-վերակերտիչ գործունեությանը, պատմական մեծ փորձին նվիրված ֆունդամենտալ աշխատությունների ստեղծման վրա, զարգացած սոցիալիզմի հասարակության օրինաչափությունների խոր ուսումնասիրության, ընդլայնված սոցիալիստական վերարտադրության, արտադրական և գիտատեխնիկական պոտենցիալների, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, տնտեսական մեխանիզմի բարելավման, կառավարման սխեմի կատարելագործման հարցերի վրա: Գարեկուր նշանակություն են ստանում զարգացած սոցիալիզմի հասարակության կյանքի նոր պրոցեսների բնությունը, նոր մարզու ձևավորման գիտական հիմունքների մշակումը, ազգային հարաբերությունների, զարգացման, ազվետական ժողովրդի՝ նոր գաղափարական, սոցիալական և ինտերնացիոնալ հանրության ճեղքագ համախմբման և ՄՄԿ XXVI համագումարում նշված ուրիշ սոցիալական երևույթների ուսումնասիրումը:

Համալսարանի հասարակագետները պետք է ակտիվորեն աշակցեն կուսակցական կազմակերպությանը գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքում, ուժեղացնեն ուսանող երիտասարդության գաղափարական դաստիարակի իրենց դերը, նրանց մեջ համառ ու հետևողականորեն կայունություն ձևավորեն ամեն տիպի բշխմական գաղափարախոսության ու պրոպագանդայի նկատմամբ, ներառյալ նրանց վեճ բարոյական ու քաղաքական կուլտուրա, դաստիարակեն սովետական հայրենասիրության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի, քաղաքական զգնություն, սոցիալիստական մեծ հայրենիք պաշտպանելու պատրաստակամության սզով:

Համալսարանին սպասում են բազում կարևոր գործեր, շարունակում է ընկ. Կ. Գեմիրեյանը, և մեկ լիահույս ենք, որ նրա կոլեկտիվը, կուսակցական կազմակերպությունը, ճենվելով աշխատանքային, ստեղծագործական հիանալի ավանդույթների վրա, հարստացնելով դրանք, պատվով կկատարեն առաջադրվող մեծ ու պատասխանատու խնդիրները: Ներկա ճորքայանը նրանք պետհամալսարանի պատմության ար-

ժանաբնաբան մի ուղեհիշ է, որից այն կողմ բացվում են նրա անդուլ բեղունավոր գործունեության էլ ավելի լայն հորիզոններ՝ ի բարօրություն սովետական ժողովրդի, ի բարօրություն մեր սոցիալիստական ճարտեհի: Այն, ինչ համալսարանն է արև անցած վեց տասնամյակներում, ասկե տառերով և ընդմիջորոշված կմնա մեր ժողովրդի սոցիալիստական վերածննդի պատմության մեջ:

Քույլ տվեք, վերջում ասում է ընկ. Կ. Գեմիրեյանը, մեկ անգամ ևս շնորհավորել նրանք պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը, ամբողջ կոլեկտիվին 60-ամյա հորեյանի առթիվ, հաստատ համազմունք հայտնել, որ համալսարանականներն իրենց բովանդակ է հաղորդում, գիտելիքները, տղաները կնվիրեն ՄՄԿ XXVI համագումարի առաջադրած վեճ խնդիրների իրականացմանը, կուսակցության ու ժողովրդի գործին:

Այնուհետև ելույթ է ունենում Հայկական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Լ. ՂԱՌԻՔԱՆՑԱՆԸ: Նա համալսարանի ղեկավարներին է հանձնում մինիստրության կողմից, ողջ կոլեկտիվի շքերդ ողջույնը բռնի ռեկտորատին, կուսակցական արմատիքներով և կոմերիտական կազմակերպություններին, պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը և բոլոր աշխատողներին: Նա միաժամանակ սրտառույ խոսք է տալով համալսարանի շրջանավարտների անունից, երախտագիտության ու հարգանքի տուրք է մատուցում համալսարանի անվանի դասախոսներին:

Իժվար է զենհատել այն դերը, որ խաղացել է նրանք պետական համալսարանը հանրակրթության գիտական կազմակերպությունների ու գիտությունների ակադեմիայի ստեղծման գործում, իր ելույթում ասում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆԸ: Ապա նա ակադեմիայի սխեմայում աշխատող գիտնականների անունից սրտանց շնորհավորում է մայր կրթության 60-ամյակը, հավատարմացնում, որ նրա սաները մշտապես բարձր կպահեն հարգազատ համալսարանի պատիվը:

Կուսակցության Մյասնիկյանի շրջանային կոմիտեի անունից ողջույնի խոսք տալով ՄՄԿ XXVI-ին կոմիտեի առաջին քարտուղար Գ. ՄՈՒՐԱՆՑԱՆԸ: Սովետական Հայաստանը և նրանք պետական համալսարանը ծննդակից են, ասում է նա, նրանք մեծ Հոկտեմբերի երկվորյակներն են: Միայն սովետական իշխանությունը իրականագրե՞ր համալսարանն ունենալու հայ ժողովրդի դարավոր իղձը: Պետական համալսարանը վերջին տարիներս ավելի է քան առնականացավ հանրակրթության ժողովրդական տնտեսության վերելքին համապատասխան: ՀԿԿ կենտկոմի և Մինիստրների խորհրդի ձեռնարկած միջոցա-

ռումները եւր հեռանկարներ են բացում այդ բանի համար:

— Մենք, երկրի շատ համալսարանների ներկայացուցիչներ, — իր ելույթում ասաց Վիլյուսի համալսարանի ռեկտոր, կիսովական ՍՄՀ ԳԱ ակադեմիկոս, ՍՄՀՄ Գերագույն սովետի դեպուտատ, Սոցիալիստական աշխատանքի հեռա ՅՈՒԿՈՒԲԻԼՈՒՄԸ, — այստեղ ենք եկել ամենահեմալայի համալսարաններից մեկի կոլեկտիվին շնորհավորելու պանծալի հորեյանի առթիվ և մեր հարգանքն արտահայտելու այն հիմնավորց մշակայային ավանդույթները շարունակողներին, որոնք գալիս են դարերի խորհից և խոշոր հաջողությունների են հասել մեր ժամանակներում, ինչպես նաև մեր հարգանքն ու հիացմունքը հայտնելու տաղանդավոր հայ ժողովրդին:

Ելույթ է ունենում Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոֆեսոր, պրոֆեսոր Ֆ. ՎՈԿՈՎԸ: Նա Մոսկվայի համալսարանի 80 հազարանոց կոլեկտիվի անունից արտազին խոսեցրով շնորհավորելով Երևանի համալսարանի հորեյանը՝ նշեց, որ ոչ թե կռկրեւ, այլ պատմական մատչաբներով վերցրած, մեր համալսարանի զարգացման 60 տարիները անխզելիորեն կապված են այն ուղեծրերի ու դարերի հետ, որոնց ընթացքում Հայաստանը աշխարհին տվել է վառ մտքի, կրթության, առաջավոր համոզմունքների տեր մարդիկ: Եվ այդ տարիներն ու դարերը կազմում են մի միասնային պատմական միասնություն, որը մեր ժամանակների մարդկանց մեջ հպարտություն ու հիացմունք է առաջ բերում: Մենք շատ լավ գիտենք, շարունակեց Ֆ. Վոկովը, և հպարտանում ենք նրանով, որ իր պատմության տարիներին ձեր համալսարանը դաստիարակել է հիանալի գիտնականների, ակնավոր բանաստեղծներին, գրողներին, առնչյալ հազարավոր առաջնակարգ մասնագետների մի ամբողջ աստղաբայ, որոնք համապատասխանում են համաշխարհային ամենաբարձր համալսարանական ստանդարտներին: Ձեր սաներից շատերի անունները առհասարակ գրված են համաշխարհային գիտության ու մշակույթի պատմության մեջ և մեր հայրենիքի հպարտությունն են:

Հանրապետության բուհերի ղեկավարների խորհրդի նախագահության և բուհերի կոլեկտիվների անունից Երևանի պետական համալսարանի կոլեկտիվին շնորհավորեց Երևանի Կ. Մարտի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ղեկավար Ռ. ՄՈՎՍԻՍՅԱՆԸ, հանրապետության աշխատավորության անունից՝ Երևանի Ձերժինակու անվան հաստոցաշինական գործարանի բանվոր Ս. ՂԱԶԱՐՅԱՆԸ, սփյուռքահայ և արտասահմանցի ուսանողների անունից՝ համալսարանի նախկին ասպիրանտ, ֆրանսահայ ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԸ:

Համալսարանի ուսանողության կողմից ելույթ

ունեցավ ուսանողուհի Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

— Քույլ տվեք համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և բոլոր ժամանակների շրջանավարտների անունից շնորհներ ողջունել և շնորհավորել ձեզ և ի դեմս ձեր՝ մեր ողջ ժողովրդին, Սովետական Հայաստանի անդրանիկ բարձրագույն ուսումնական հաստատության վարսունամյա հորեյանի առթիվ, — իր ելույթում ասաց Հայկական ՍՄՀ ԳԱ բարակից անդամ է. ԱՂԱՅԱՆԸ: — Երևանի պետական համալսարանը սովետական կարգերի ծնունդն է: Այն ժամանակ, երբ Հայաստանը ավերումից ու կոտորածից դեռ եւր ազատագրվել, սովետական իշխանությունը հեռավորություն ստեղծեց բարձրագույն կրթության առաջին օջախը հիմնադրելու, երիտասարդությանը բարձրագույն ուսում տալու համար: Ի մի հավաքելով տարբեր երկրներում գտնվող հայ մտավորականներին, ժամանակի առաջավոր մասնագետ-գիտնականներին, համալսարանն ստեղծեց իր դասախոսական հիմնադիր կազմը, որն անսահման նվիրվածությամբ, անսպառ եռանդով ու բազմաբեղուն գործունեությամբ լծվեց հայ երիտասարդության կրթության գործին:

Համալսարանը եղել է կարգերի պատրաստման առաջին և առաջնակարգ դարբնոց մեր հանրապետությունում, այսուհետև էլ նա պատվով կհատարի իր դերն այդ բնագավառում, էլ ավելի նշանակալից գիտական նվաճումներով կհարստացնի սովետական գիտության գանձարանը, գործունե մասնակցություն կրելի մեր հանրապետության հասարակական-ազգային կյանքին, կլինի կարգերի ֆաղափական-գաղափարական դաստիարակության առաջապահ դիրքերում, կայաջարի հանուն կուսակցության գրխավոր գծի աճելու կենսագործման, բարձր կպահի ինտերնացիոնալ գործը:

Համալսարանի ղեկավար Ս. ՀԱՄԱՐՅԱՆԸ հանդիսավոր նիտի մասնակիցների անունից խորին շնորհակալություն է հայտնում այն շերմ խոսքերի և բարի ցանկությունների համար, որոնք սովեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին ֆարտուղար ընկ. Կ. Գեմիսյանի բազմաթիվանոցակ նառում. շնորհակալություն է հայտնում հորեյանի առթիվ ստացված ողջունների համար, Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, բոլոր աշխատողների և ուսանողության անունից հավատարմացում, որ նրանք ամեն ինչ կանեն բուհին առաջադրված մեծ ու հոյակապ խնդիրները պատվով կատարելու համար:

Վերջում տրվեց նոխ համերգ՝ հանրապետության տրվեստի վարպետների մասնակցությամբ:

Ս. ՄՈՐԱԿՅԱՆ  
Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ